

75. ԳԵԼՎԵՆԻ ԱԽՊԵՐ

Կէղնի թագավոր մը, կնիկ մը ու տղեմ՝։ Տղեն կէրթա ավջուԹենի, կիգա իրիկուն տեսնա օր մոր մատներ էրուկ է։

Կասե մոր.—Մերի՛կ, մատերդ հ՚ո՞րին ես էրի։

Մեր լէ կասա.—Քու հեր լազաթ չի տա ընձի, կծեծե զիս։

— Կանա՞ս մըզի պաշար կողիս, առնիմ զքըզի, էրթամ։

Մերն է, կէլնի պաշար կողի օր էրթան, հեր կկռահի, կէլնի առավոտ չթորկի էրթան։

Առավոտ տղեն կէլնի կառնու զուր թըվանք, զուր թազի-թուլեն, կէրթա սար, ավշուԹեն կէնե։

Իրիկուն էղավ, տղեն առավ զուր թըվանք, զուր թազի-թուլեն, էկավ տուն։ Տեսավ օր մոր մատներ էմ լէ էրուկ է։

Ասաց.—Մերի՛կ, էմ լէ քու մատներ հ՚ո՞րին ես էրի։

Կասե.—Որթի՛, քու հեր լազաթ չի տար ընձի։

Տղեն կասե.—Էմ լէ կանա՞ս պաշար կողիս օր էրթանք գիշերով։

Մեր պաշար կողեց, գիշեր կես էղավ, առավ զպաշար, կանչեց ուր աստված, ինկավ ճամփա։

Շատ գնաց, քիչ գնաց, էլավ մեկ սարի գլուխ, տեսավ օր սարի գլուխ մեկ լավ քոշկ կա։

Մոր ասավ.—Կէրթանք էդա քոշկ, կէնինք մըզի խոնախ։

Տեսան օր էդա քոշկի մեշ իսկի մարդ չկա, էլան նստան էդա քոշկի մեշ։ Իրիկուն էղավ, տեսան օր մարդ մը սարեն փրթավ էկավ։ Էկավ զարկեց զուր քոշկի դուռ, էլավ վերև, տեսավ օր կնիկըմ՝, տղեմ՝ նստուկ ին։

— Ա՜յ հողածի՜ն,—ասաց,—օձն ուր պորտով, հավքն ուր թեվով զէդ չկարնա անցնի՝ դու ինչպե՞ս էկար էս տեղ էլար մտար։

Տղեն է, կասե.—Ես իմ կուվաթին հ՝ավլա էղա, էկա մտա էստեղ։

Մարդն ասաց.—Ես Գելվենի մարդն իմ. հար ինչ օր դա ռաստ, ես կուտիմ։

Տղեն ասաց.—Թ՝որ կարնաս՝ կուտիս զաթան։

Գելվենի մարդ թռավ ասաց.—Քու գլխու գալած ընձի պատմե, դու ի՞նչ քաշ մարդ իս օր ես չըմ կարնա քըզի ուտի։

Տղեն ասաց.—Ես լէ քու պես քաշ մարդ իմ, ես լէ գիշեր-ցորեկ սար-ձորն եմ էղե։

Մարդն ասաց.—Մադա՜մ օր հմլա է, քու գլխու գալածը պատմէ ընձի, դու ինչպե՞ս էլար ըստեղրանք։

Տղեն ասաց.—Սարեն իրկուն օր կփրթենենք կիգանք, կտեսնենք օր իմ մոր մատըն էրուկ էր, կասենք՝ «Մերիկ, հ՝որին զմատներդ էրեր ես»։ Կըսե. «Քու հեր հ՝ըմն օր զիս կծեծե, թե զիս լաղաթ իսկի չի տա, ես չըմ կանե ըստեղ»։ Ես լէ ըսի. «Մադամ օր հմալ է, պաշար կողէ օր էրթանք գիշեր»։ Գիշեր էր, ես լէ ասեցի՝ «էրթանք զիմ մեր ազատինք իմ հոր ձեռքեն»։ Էկա էդ քոշկին ըռաստ, իմ մոր ասեցի. «Կէլնինք ըստեղ, կէլնինք մըսաֆըր»։ Զարկեցի զդուռ էլա վերին դին, տեսա օր մարդ չկեր, իրիկուն էղավ, տեսա օր տու փրթար էն դիեն էկար։

Մարդն էլ ասաց թե.—Ես դու կէզնինք ախպեր, քանի օր ընձի լէ էփող-թափող չկա, քու մեր թըղ էղնի մըզի էփող-թափող, լվացող մեր։

Թագավորի տղեն ընդունեց Գելվենի մարդուն հոգեկան ախպեր։ Էզան հոգեկան ախպեր, կերան ուրանց, խըմեցին, էլան առավտուն փակեցին քոշկի դուռ, թալեցին ուրանց ձիեր ու գացին։

Գացին, աղեկ-վատ օլըրդան, ուրանց կաքավ է, ճնճուղ է, առին էկան։ Էլավ մեր, սերսուի էփեց, բերին դրեցին առջև ուրանց, կերան։

Առտուն օր էղավ, էլան գացին էմ լէ ավջութենի։ Իրկուն էղավ, դարցան էկան ուրանց զարկածներ ուրանց հետ։ Իրկուն էղավ, մեր պատրաստեր էր ուրանց աղեկ-վատ եմակ, կերան ու քնան։

Քանի մ' ավուր, սորա տըղի մոր միտք խըռպավ Գելվենու հետ։

Գելվենուն ասաց.—Պիտի զիս առնես։

Ասաց.—Չէ՛, ես հոգեկան ախպեր ըմ էղի քու տղի հետ, չը՛մ առնի։

Մերն ասաց.—Չէ՛, պիտի առնիս։

Գելվենին ասաց.—Մաղամ օր քըզի առնիմ, զքու տըղեն ես իմա՞լ կորցում։

Մերն ասաց.—Ես պիտի հիվնդնամ պառկիմ, իմ տղին կասիմ հիվանդ իմ, չուր առծըվի* կաթ չիկա, ես չըմ սաղնա։

Իրիկուն էղավ, տղեն էկավ տեսավ օր մեր հիվանդ պառկուկ է։

Ասաց.—Մերի՛կ, ո՞ւրին ես հիվնդցի պառկի։

Մերն ասաց.—Օրթի, հիվնդցա, փորըս կցավա, գլուխս կցավա։

Տղեն կասե.—Ըստեղ տոքթոռ չկա, ես ո՞ւսա բերիմ քու վըրեն։

Մեր կասե.—Տղա՛, ես տոքթոռի հիվանդ չիմ, փշում առծըվի վաթ բերիս, կսաղնամ։

Տղեն կասե.—Մերիկ, ես առծըվի բուն ըստեղ չըմ տեսեր իմ, ես ո՞ւստ բերիմ։

Մեր կասե.—Էլի Գելվենի ախպոր հարցու, Գելվենի ախպեր գինա։

Կէլնի Գելվենի ախպոր լէ կհարցու, կասե.—Հա՛, էնա սարի գլուխն է։

Տղեն է, կէլնե հեծնի զուր ձին, կթալե զուր նետվանեղ զոր փեճ, կանչե զուր ատտված, կէրթա։

Գնաց սարի գլուխ, իջավ, կապեց զուր ձին, գնաց առծըվի քնան խեչ, տեսավ օր թե առծիվ էնտեղ չէր, ո՞ւշաղ օձ կէլնի ծառ, օր ուտե առծըվի ձըգտիք։ Տղեն է, կէրթա կօլրդի, կիգա տեսնա օր ո՞ւմեն տարի էտ ո՞ւշաղ օձ կուտի զէդոր ձըգտիք։ Տրղեն

---

* Բնագրում՝ առյուծի (Ս. Կ.)։

կանչեց զուր աստված, քաշեց զուր նետվանեղ, զարկեց զէդ հ՝ուշապ օձ փառչընից սար։ Պառկավ զէդ ծառի տակ, քնավ տղեն, առծրվի ձդտիք բացեցին զուրանց թևեր, հով ածեցին վրրեն։ Տրղեն քնուկ էր, առծրվի ձրգտիք տեսան, օր առծիվն էկավ, ասեց, «Հը՞մ, իմ ձրգտիք ուտող պառկուկ է ծառի տակ, էրթամ օր թե քանի չփախեր ա»։

Ձրդտիք վերա կճրվճրվան, կասին.—Ծառն իշե։ Ծառու տրկուն մը՞ խիմիշե։

Առծիվ կասե.—Ցավաշ տեսնամ, թե իմ ձրգտինք ի՞նչ կասին՝ «Ծառն իշե, ծառի տրկուն մի՞ խիմիշե»։

Առծիվ կիշա տեսնե օր հ՝ուշապ օձ փառչինուկ է ծառ։

Առծիվ կբանա զուր թևեր տղի վերեն, օր քնի հով էղնի։

Տղեն առավ զուր քուն, էլավ։

Առծիվն ասաց.—Տղա՞, հ՝ուզե՝ իտամ։

Տղեն ասաց.—Կաթ կուզիմ քենե։

Առծիվն ասաց.—Էդի բան չէր հ՝ուզիր ինձնե։ Ես ուրիշ բանե վախեցա։ Դո՞ւ կաթ ուզա ինձնե։

Առծիվն ասաց.—Տղա՞, դու խամածի խաբած իս։

Տղեն ասաց.—Իմա՞լ խամածի խաբած իմ։

Առծիվն կասե.—Ես էն խատար գինամ օր դու խամածի խաբած իս։

Առծիվն է, կիտա զկաթ ուրեն, կասե.—Ես էրկու ձագ լէ քդի կիտամ, հ՝ուր օր գացիր՝ տանիս հետ։

Տղեն առավ զկաթ ու առծրվի էրկու ձագ, հեծավ զուր ձին, էկավ։ Էկավ, սարի գլխեն տեսավ օր մերն ու Գելվենի ախպեր տանիք կխաղան։

Գելվենի ախպեր մորն ասաց.—Էկավ քու տղեն։

Մերն իջավ, թալեց ուրին տեղ, պառկավ։ Տղեն էկավ, բերեց կաթ, տվեց մոր՝ կերավ, սաղցավ։ Մնաց էրկ օր, էմ լէ հիվնդցավ։ Էկավ տրղեն տեսավ օր էմ լէ մեր* հիվանդ է։

Մորն ասաց.—Հ՝որի՞ն էմ լէ հիվանդ ես։

Մերն ասաց.—Խաղող չուր չի գա, չը՞մ սաղնա։

Տղեն ասաց.—Ըտ տեղրանք էքի չկա, ես հ՝ո՝ւստ գրտնամ խաղող։

---

* Բնագրում տղեն (Ծ. Կ.)։

Մերն ասաց.—Էլի Գելվենի ախպոր հարցու։ Գելվենի ախպեր գինա։

Տղեն էլավ Գելվենի ախպոր հարցուց։

Գելվենի ախպերն ասաց.—Դե՜, էնա սարի գլուխն է։

Իջավ, հեծավ զուր ձին, թալեց էրկու առծրվի ձրգտիք թարքին, կնաց։ Կնաց էն սարու տակ, ասաց. «Ցավա՜ղ, փշում՝ պառկիմ»։ Մեկ առծրվու ձագ նստավ գլխու վերև, մեկ նստավ՝ օտքերու տակ։

Առծրվու ձրգտիք տեսան օր յոթ հատ դև էն դիեն էկան, էկան օր տղեն ըսպանին՝ մորթին։ Առծրվու ձրգտիք էլան կպան դևեր, չքիմիշան ղտղեն հ'իմցուցնին։ Կրուվրտան ուրանք ու դևեր, զյոթ դևն մորթեցին ու թալեցին գետին։ Էկան նստան էմ լէ տդին օտքերուն տակ ու գլխու վերև։

Մեկ թոթվեց զթևեր, արուն ցխաց, քիսավ տզի քիթ ու պերան, տղեն էլավ նստավ։

Ասաց.—Էդ ի՞նչ արուն է.

Ձրգտիք ըսին.—Դևեր սպանեցինք, էս արուն լէ ցըխաց քիսավ քըզի։

Տղեն էլավ, թորկեց զձիգտիք ու ձին էնտեղ, կնաց օր խաղող բերե։

Տեսավ օր մեկ խորոտիկ ախչիկմ՝ կա էքու միչի քոշկ։

Ախչիկն ասաց.—Հա՜, գիտի հողածին, հավքն ուր թևքով, օձն ուր պորտով չկանա ըստեղ օլըրդի, յոթն դև կան էգտեղ, մկա կիգան զքըղի կկարտեն, գտցածին սարեր։

Տղեն ասաց.—Ախչի՜կ, գնա իշե տես օր քու յոթ դև իմ առծրվի ձրգտիք կոտորած, թալած ին գետին։

Ախչիկն ասաց.—Մադամ օր հ'մալ է, մեր փեշքիրներ էկու փոխինք։ Խաղող կիտամ տանիս, ամա դու խամածի խաբած իս։

Տղեն ասաց.—Չէ՜, ես խամածի խաբած չիմ։

Ախչիկն ասաց.—Չէ՜, դու խամածի խաբած իս, առ զխաղող, գնա։

Տղեն առավ զխաղող ու առծրվու ձրգտիք, հեծավ զուր ծին ու էկավ։

Գելվենի ախպեր իջավ, ասաց.—Քու տղեն էկավ։

Մեր լէ իջավ, հիվնդացավ, պառկավ։

Տղեն էկավ, բերեց տվեց խաղող զուր մոր, կերավ։ Լուսուն է-

լավ օր սաղ էր։ Մնաց էրկ օրըմ, էմ լէ հիվնդցավ, պառկավ։ Տըղեն էկավ տեսավ օր մեր էմ լէ պառկուկ է։

Ասաց.—Տո մերի՛կ, ի՞նչ էղավ քըզի օր դու հըմա կհիվնդնաս։

Մերն ասաց.—Ձմերուկ բեր ընձի օր սաղնամ։

Տղեն կիշե, կասե.—Ձմերկի բոստան չկա էս տեղ, հ՚ո՞ւստ պերիմ ես։

Մեր կասե.—Գելվենի ախպոր հարցու, էնի գինա։

Տղեն կէլնի Գելվենի ախպոր կասե.—Էստեղ ձմերուկի բոստան հ՚ո՞ւր կա։

Գելվենի ախպեր կասե.—Էնա սարի գլուխ կա։

Իջավ տղեն, առավ զուր առծըվու ձըգտիքն ու գնաց։ Գնաց, շատ գնաց, քիչ գնաց, պառկավ սարի տակ ու քնավ, առծըվի ձըգտիք մեկ գլխու վերեն, մեկ՝ օտքերու* տակ։

Տեսան օր յոթ հատ դև էնդիհեն էլան ու էկան։ Առծըվու ձըգտիքն էլան էմ լէ կպան էդ դևեր, կտրտեցին դևեր թալին գետին։

Մեկ էմ լէ թոթվեց զուր թևեր, արուն** ցխաց տղի քիթ-բերան։ Տղեն էլավ նստավ։

Ասաց.—Էդ ի՞նչ ցխաց իմ քիթ-բերան։

Ասաց.—Արուն է։ Յոթ հատ դև էկավ չղմիշանք զքզի իմցնինք, մենք էլանք կռվանք հետ ինոնց, ըսպանեցինք, էդ արուն էդօր ցխաց, քիսավ քե։

Տղեն թորկեց էն տեղ առծըվու ձըգտիք, զուր ձին, էլավ գնաց բոստան օր ձմերուկ բերե։ Տեսավ օր լավ, խորոտիկ ախչիկ մը կա հ՚ոդի։

Ախչիկն ասաց.—Հայ, հողածի՛ն, օձն ուր պորտով, հավքն ուր թևով ըստեղ բան չունի, դու իմա՞լ ես էկե հ՚ոդի։

Տղեն ասաց.—Քելի տե՛ս, քու յոթ դև առծվի ձըգտիք մորթած, թալած ին գետին։

Ախչիկն ասաց.—Ձմերուկ կուտամ տանիս, ամա դու խամածի խաբած իս։

Տղեն ասաց.—Չէ՛, ես խամածի խաբած չեմ։

Ախչիկն ասաց.—Խամածի խաբած իս, բի իմ մատնիկ ու զըքուն փոխինք, գնա։

---

* Բնագրում՝ գլխու (Ս. Կ.)։

** Բնագրում՝ արուն չիք (Ս. Կ.)։

Տղեն փոխեց զմատնիկ, առավ զձմերուկ, էկավ, հեծավ զուր ձին, առավ զուր առծրվու ձրգտիքն ու քելեց։

Գելվենի ախպեր տեսավ օր տղեն առավ զձմերուկն ու էկավ, իշավ, մոր ասաց.—Տղեն առավ զձմերուկն ու էկավ։

Մեր իշավ, էմ լէ թալեց զուր տեղ ու պառկավ։ Տղեն բերեց ձմերուկ, մեր կերավ սաղցավ։ Լուսուն էլան տանիք։

Մերն ասաց.—Էկու սատրանջ մը խաղանք, որն որս օր տարավ, զարկե ձգե ղտարվող ցած։

Խաղցան սատրանջ, տղեն չզմիշավ, տարվավ մոր։ Մեր զարկեց տղեն, տրվեց ցրվկեն ցած։ Տղեն էլավ, էկավ տանիք։ Մերն թռավ տղի մոտ։

Ասեց.—Տղա՛, էկու ուզո՞րթ ասե քու ղուվաթ, ի՞նչ կհաղթե զքրղիկ։

Տղեն ասաց.—Գութնի զընշիլ զիս կհաղթե։

Մեր բերեց զընշիլ, կապեց տրղեն, թալեց գետին, պոռաց, ասաց.—Գելվենի ախպե՛ր, էկու կտրե ըզգլուխ։

Մեր օր պոռաց, տղեն զինք թոթվեց. օր թոթվեց, զընշիլի կտորտանք թռան էրկինք։

Տղեն ասաց մոր.—Մերի՛կ, ի՞նչ է կէնիր, հ՞որին զիս կուտար մորթել։

Մերն ասաց.—Ես քու ղուվաթ կհասկնամ։

Տղեն ասաց.—Սելի շրրիդ բե, կհասկնաս իմ խուվաթ։

Կապեցին զտղեն սելի շրգով, թալեցին գետին։

Մեր բոռաց ասաց.—Գելվենի ախպե՛ր, էկու կտրե զգլուխ։

Գելվենի ախպերն ասաց.—Ես չըմ ղիմիշիմ, իմ հոգեկան ախպերն է էգա։

Մեկ լէ, օր բոռաց մեր, տղեն թոթվեց զինք, կտրտեց շրրիդ։

Տղեն ասաց.—Տո՛ մերիկ, ի՞նչ է կէնիս։

Մերն ասաց.—Տղա՛, ես քոռցե՞ր իմ, քրզի ի՞նչ կէնիմ, ուղորթ օր բերանս կասե, սիրտս չասեր։

Տղեն ասաց.—Կուզես՝ մորթե, կուզես՝ թող, իմ նետվանեղի թել բերես կապես իմ էրկու բութ, նոր իմ ղուվաթ կհասկնաս։

Մեր կապեց զէրկու բութ զտղին։ Բոռաց.—Գելվենի ախպեր, էկու կտրե զտղի գլուխ։

Գելվենի ախպեր ասաց.—Ես չըմ կարնա, զիմ ձեռք չբռնե կտրեմ զգլուխ։

Մեր կհանե տղի աչվրներ, զաջ կթալե ձախ կողմ, ձախ լէ կը-

թալե աջ կողմ։ Սորա Գելվենի ախպոր կասե.—Վերո՛ւ, տար թալե հմալ տեղ օր էտոր ծեն իմ ականճ չընկնի։

Գելվենի ախպեր կտանի կթալա ջրհոր, հ՝իգա։

Մեր կասե.—Գելվենի ախպեր, զէդ շան առծրվի ձրգտիք դոր կէրթան։

Առծրվի ձրգտիք գացին ջրհոր, գտան զտղեն, հ՝ընցնող-դարցնողից հաց կուզին, տանին տան էդ տրղին ջրհորի մեջ, ուտե։

Բազրրգանմ՝ էկավ էդտեղ թափեց, առծրվի ձրգտիք էկան հաց ուզեցին տարան թալեցին ջրհորի մեջ օր տղեն ուտե։ Բազրրգան տեսավ որ առծրվի ձրգտիք դարցան էկան իմալ աջալա։

Ասեց.—Գացեք տեսեք վի՞րն է կտանին։

Գացին, տեսան օր կտանին ջրհոր կթալին ու կդառնան։ Էկան բազրրգանին ասին։ Բազրրգան ասաց.—Թե մալ է՝ ձրզիկ, թե չան է՝ ընձիկ։

Մրշկներ քաշին զչուր թափեցին, քուլակ ընկավ տղի ձեռք։ Տղեն էլավ մտավ քուլկի մեջ։

Մրշկներ պոռացին ուրանց ընկերներում.—Ծանտրրցավ, էկեք քաշինք հանինք։

Քաշեցին հանեցին, տեսան օր՝ իսան։ Վերցին առին գացին ուրանց բազրրգանի խեչ։

Բազրրգան ասաց.—Ա՛յ տղա, դու ի՞նչ մարդ իս։

Տղեն ասաց.—Իմ աչվրներ հանեցի՞ն։

Բազրրգան ասաց.—Քու աչվրներ ո՞ւր է։

Տղեն ասաց.—Իմ ջերեր իշկեք, տեսեք։

Իշեցին տեսան, աչվրներ ջեր տեսան։ Հանեցին աչվրներ, աջ կողմին դրեցին ձախ կողմ, ձախ կողմին դրեցին աջ կողմ։ Օզոր էկավ փշումը։

Տղեն ասաց բազրրգընին.—Մադամ դու աղեկութեն էրեցիր, էրթամ իմ հայիֆ մարամ առնիմ գամ։

Բազրրգան ասաց.—Ի՞նչ հայիֆ է, ի՞նչ մարամ է, ախչիկ է, ես կէրթամ գտնամ, թե փարի պետք ունիս՝ թագավորի խազինեն լէ ընձի չի հասնիր։

Տղեն ասաց.—Չէ՛, իմ ձեռքով իմ մարամ կկատարիմ, նա փարի պետքութեն ունիմ, նա՝ աղչկան։

Բազրրգան ասաց.—Մադամ կէրթաս, գնա, ագյար հալալ կաթ ուտող էլար, ղաթի զիս կիգաս գտնաս, թե հալալ կաթ ուտող չէղար՝ նա կիգաս, նա կգտնաս։

Բազբրգան էր, բառցավ կնաց ուր ճամբու հետ, տղեն էկավ մոր թարաֆ։

Էկավ, տեսավ Գելվենի ախպեր օր տղեն կիգա, իջավ, մորն ասաց.—Վալա՜, քու տղեն էկավ։

Գնաց էլավ վերին դին, Գելվենի ախպոր բարև տվեց, բարև առավ։

Գելվենի ախպորն ասաց.—Գնա՜ քու արևուն արև էրե, քըզի բան չըմ էնի։

Հրաման էրեց առծըվի ձըգտոց օր մոր մեկ-մեկ ճիվ բռնեն քաշեն. էրեցին մոր էրկու կտոր, թալեցին էն դին։

Տղեն էլավ ուր ձեռքով մոր կյավդեն մանտրեց, էրեց կտոր-կտոր, թալեց առծըվի ձըգտոց հ՝առեջ, կերան։

Հեծավ զուր ծին, գնաց փեշկիր, մատնիկ փոխող զէրկուս աղջիկներ գտավ, առավ էկավ, գնաց բազրգընի խեչ։

Յոթն օր, յոթ կիշեր, յոթ ցերեկ հարսնիք բռնեցին, կերան, խմեցին, քեֆ էրեցին, հասան ուրանց սրտի մուրազին։